ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Սյունիքի պատմության հետ առնչվող մի շարք հարցերի պարզաբանումը կապված է նահանգի տարածքով անցնող առևտրական և ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող ճանապարհների ուսումնասիրության հետ։ Թեև ճանապարհների մասին մատենագրական վկայությունները սուղ են, սակայն լեռնանցքների, ավերակ բերդերի, կամուրջների և քարավանատների դիրքը հնարավորություն է ընձեռում որոշելու նրանց ուղղությունը։

Սյունիքի համար առանձնապես կարևոր ճանապարհներից էր Դվին—Նախիջևան—Օրդուբաղ—Վարդանակերտ—Փայտակարան—Կասպից ծով երթուղին, որի հետ նահանգը կապվում էր Շաղատ—Նախիջևան ճանապարհով և դրա միջոցով միանում Դվին—Փայտակարան և Դվին—Նախիջևան—Թավրիզ ուղիներին[1]։

Մեծ կարևորություն ուներ նաև Սյունիքի տարածքով անցնող Դվին—Բերդկունք—Պարտավ ուղին, որը հանգամանորեն ուսումնասիրված է[2]։

Սյունիքի և ամբողջ Անդրկովկասի համար խոշոր ռազմաստրատեգիական նշանակություն է ունեցել Շահի յոլ ճանապարհը, որը Սյունիքը Միլի դաշտով կապում էր Շիրվանի ու Բաքվի հետ և անցնելով Դերբենդի անցքով՝ հասնում էր մինչև Ռուսական հարթության հարավային տափաստանները[3]։ Հնագույն ժամանակներում այս ճանապարհով էին Սյունիք ներխուժում Կովկասյան լեռներից հյուսիս բնակվող ցեղերը։

Մեկ այլ ճանապարհ գալիս էր Թավրիզից և անցնելով Արևիք գավառի տարածքով՝ Տաշտունի լեռնանցքով մտնում էր Զորք գավառը։ Ողջի գյուղի մոտ Կապուտջուղի լեռնանցքով միանում էր Դողթնից եկող ճանապարհին, այնուհետև ընթանում Ողջի գետի հոսանքով, Գեղիի գետաբերանի կամուրջով մինչև Բաղաբերդ։ Այնտեղից ուղղվում էր հյուսիս, ապա անցնում Վերին և Ներքին Գիրաթաղ գյուղերով, Գազրոյլի լեռնանցքով և մտնում Տաթև, այնուհետև ընթանալով «Սատանի կամուրջով»՝ Եռաբլրի սարահարթով միանում «Շահի յոլ» ճանապարհին[4]։

Ստորև մենք կանդրադառնանք այս նշանավոր ճանապարհի մի քանի ճյուղերին, որոնք ունեին կարևոր ռազմաստրատեգիական նշանակություն և անցնում էին Սյունյաց Բաղք, Քաշունիք, Բղեն և Կովսական գավառների տարածքով, միաժամանակ կվերականգնենք նրանց ուղղությամբ կառուցված բերդերի պատմաաշխարհագրական անունները։

Ճանապարհներից մեկը Տաթևը կապում էր նահանգի ամենանշանավոր ամրոցի՝ Բաղաբերդի հետ։ Սա Տաթևը Բաղաբերդի հետ կապող երկրորդ ճանապարհն էր։ Դուրս գալով Տաթևից և անցնելով համանուն գետը սկզբնավորող Տաթև, Սվարանդ և Գազրոյլի ձոր գետակների ստորին հոսանքների շրջանում գտնվող կամուրջներով, Տանձատափ գյուղով, Հաչքարաձ լեռան մոտով, Օքուզարաթ[6] լեռնանցքով

---

1 Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 198—199։

2 Լևո, Հայոց պատմություն, հատ. 2, Երևան, 1947, էջ 382։ Ստ. Լիսիցյան, ՀՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1940, էջ 28—29։ Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 175—204։ Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 87—95։ Բ. Հարությունյան, Դվին—Պարտավ ճանապարհի Sisajan-Gelakuni գծամասը, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 212—220։

3 Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 18։

4 Նույն տեղում, էջ 43—44։ Սյունիքի տարածքով անցնում էին նաև այլ ճանապարհներ, որոնք, ըստ Թ. Հակոբյանի, ունեցել են երկրորդական նշանակություն (տե՛ս «Սյունիքի թագավորությունը», էջ 86—101)։

5 Լեռը գտնվում է Տաթևի վանքի դիմաց, Որոտան գետի աջ ափին։ Տանձատափ գյուղի բնակիչների վկայությամբ անցյալում այն կոչվել է Բերդ, իր գագաթին գտնվող բնակավայրի անունով, որից աննշան հետքեր են պահպանվել, որովհետև երկրաշարժի ժամանակ լեռնագագաթը փլվել է։ Կարծում ենք, որ այստեղ է եղել պատմական Բերդ-Առավելադաշտ բնակավայրը։ Այդ հաստատվում է հետևյալ վկայությամբ. «էր և աւազականոց մի բերդ անուն հանդէպ Վանիցն, յայնկոյս մեծի գետոյն յափն քարոյն որ Առաւելադաշտն կոչեն» («Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 230)։ Բերդ-Առավելադաշտը ունեցել է անառիկ դիրք։ Գտնվելով Ծղուկք և Բաղք գավառները միմյանց կապող ճանապարհին՝ լեռնանցքից ոչ հեռու, հավանաբար սովորական բնակավայր չէր, այլ ամրացված վայր։

6 Որպես օրինաչափություն լեռնանցքները կոչվել են ամենամոտ լեռնագագաթի կամ բնա-

ճանապարհը մտնում էր Քաշունիք գավառը։ Այնուհետև անցնում էր Խոզվանի գյուղով և հասնում Տանձավեր գյուղի արևմտյան մասում գտնվող բերդը, որը անցյալում հավանաբար կոչվել է Տանձավերի բերդ՝ մոտակա գյուղի անունով։ Այդտեղից ճանապարհը գետանցքով տեղափոխվում էր Քաշունի գետի աջ ափը և ընթանալով անտառի միջով՝ հասնում Բաղք գավառի հյուսիսային դարպասը՝ Տորթնի գյուղից ոչ հեռու գտնվող լեռնանցքը[7]։ Այդտեղից ճանապարհը մտնում էր Թափուր կոչվող գյուղատեղին, այնուհետև Տորթնի գյուղը և իջնելով հարավ՝ Աճանան գետի վտակ Տորթնու ձախ ափով հասնում էր գետի և նրա վտակի ջրախառնման անկյունը, որտեղ գտնվում է Հոոմանց գյուղատեղին։ Հոոմանցից ճանապարհը շարունակում էր ընթանալ գետի հոսանքի ուղղությամբ մինչև Ս. Վանես ավերակ մատուռը, այնուհետև տեղափոխվում էր գետի աջ ափը միակ կամուրջով, որը կոչվում է «Խանի կամուրջ» և ընթանալով հարավ՝ բարձրանում Գյանջի բուրթ[8] լեռան գագաթը, որտեղ անցյալում բերդ է կառուցված եղել։ Այդտեղից ճանապարհը հասնում էր Ողջի գետի ձախ ափին գտնվող Խնկանց գյուղատեղին, ապա Շհարջիկ գյուղը և թեքվելով դեպի արևմուտք՝ անցնում Շհարջիկի արևմտյան մասում գտնվող լեռան ստորոտով, որի գագաթին պահպանվել են «Աղաչու բերդ» կամ «Ղրղալա» կոչվող բնակատեղի[9] հետքեր։ Այնուհետև ճանապարհը սկսում է բարձրանալ անտառի միջով դեպի մեկ այլ լեռնագագաթ, որը ավելի բարձր է և Շհարջիկ գյուղի բնակիչներին հայտնի է «Հուսեյն կալա» անունով։ Այդ լեռնագագաթի շուրջը այսօր էլ նշմարվում են բերդի հետքեր, որոնք կոչվում են Քյարփիչլի[10]։ Ճանապարհը այդտեղից ընթանալով դեպի հարավ-արևմուտք՝

կավայրի անունով, ուստի հավանական է, որ այս լեռնանցքը անցյալում կոչվել է «Ռոդվանիս»՝ մոտակա գյուղի անունով։

7 Այս լեռնանցքը և նրա մոտ գտնվող լեռնագագաթներից մեկը կոչվում են Քարչախ (տե՛ս «Карта ССР Армении», Ростов-на-Дону, 1926)։ Տեղանունը անկասկած առաջացել է լեռնագագաթի վրա գտնվող բավականին մեծ խաչքարից։ Նրա վրա պատկերված է եպիսկոպոսական խույր, վերևում խաչ, որը թևերի ծայրերին ունի երկու փոքրիկ ելուստներ։ Ամենայն հավանականությամբ խաչքարը մատնանշել է Տաթևի վանքի շրջակա սահմանը հարավից և հավանաբար համապատասխանում է վավերագրում հիշվող «յերկայն խաչին» (Ստեփաննոս Օրբելյան, էջ 230)։ Գորիսի շրջանի Մալդաշ գյուղի բնակիչները 1970 թ. հայտնաբերելով խաչքարը՝ նորից կանգնեցրել են հողի մեջ, իր հին տեղում, վրան փորագրելով կանգնեցման թվականը։

8 Գյանջի բուրթ անունը ծագում է Գանձաբերդից, քանի որ ունենք՝ «Գանձակ> Գյանջ» և բերդ>բյուրթ (հմմտ. Ազնաբերդ> Ազնաբյուրթ, Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 505), բերդ>բուրթ (հմմտ. Բայբերդ> Բայբուրթ, Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 62), բայց նաև բերդ> *բուրթ> փուրթ (հմմտ. Խարբերդ> Խարփուրթ, Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 293)։

Գածաբերդ լեռան գագաթին ներկայումս պահպանվել են փոսեր և գետնախորշեր։ XX դարի սկզբին, տեղացիների վկայությամբ, այստեղից հայտնաբերվել են կենցաղային իրեր, որոնք, ցավոք, չեն պահպանվել։ Լեռան հարավ-արևելյան մասում եղել է բնակատեղի։ Այդ վայրը կոչվում է Տանձուտ։

9 Աղաչու բերդը առաջին անգամ հիշատակել է Բաֆֆին (Բաֆֆի, Դավիթ-բեկ, Երևան, 1962, էջ 428)։ Նույն բերդի և նրա մոտ գտնվող մեկ այլ ամրության՝ Ղրղ ղալայի մասին գրել են նաև Ղ. Ալիշանը (Սիսական, էջ 276), Ս. Լիսիցյանը (Զանգեզուրի հայերը, էջ 40—41) և Թ. Հակոբյանը։ Վերջինս Աղաչու բերդը համարում է Ս. Օրբելյանի մոտ հիշատակված Կկոց քարը (տե՛ս «Սյունիքի թագավորությունը», էջ 134—135)։ Աղաչու բերդ կոչված վայրում ներկայումս պահպանվել են միայն մի քանի սենյակների հետքեր, որի պատճառով հնարավոր չէ պարզել, թե ի՞նչ է իրենից ներկայացրել այս շինությունը։

10 Բերդը կառուցված է եղել լեռնագագաթի հարավային մասում գտնվող մի փոքր հարթության վրա։ Այժմ նրա պարիսպներից պահպանվել են աննշան հետքեր, որոնք ձգվում են ժայռի շուրջը, բացառությամբ հյուսիսային մասի, որտեղ, ըստ երևույթին, բնական ժայռը ծառայել է որպես պարիսպ։ Հարավային մասում թափված են բազմաթիվ աղյուսաձև քարեր։ Բերդը ունեցել է երկու մուտք՝ արևելյան և արևմտյան կողմերից։ Բերդատեղից շատ լավ երևում են արևելքից՝ Ողջի գետի ստորին հոսանքները ընդհուպ մինչև Արաքս, հարավից՝ Վահանավանքը, Կապան քաղաքը, արևմուտքից՝ Բաղաբերդը, հյուսիսից՝ Աճանան գետի ավազանի բոլոր բնակավայրերը։ Կարծում ենք, որ *Յարփիչլի բերդը համապատասխանում է վերոհիշյալ ուսումնասիրողների կողմից հիշատակվող Ղրղղալային։

հասնում էր Բաղարերդ։ Տաթևը Բաղաբերդի հետ կապող երկու վերոհիշյալ ճանապարհներից՝ մեր կողմից նկարագրվածը ունեցել է առավել կարևոր նշանակություն, որի մասին վկայում են նրա երկարությամբ կառուցված բերդերը։ Այս ճանապարհի ուսումնասիրությունից եկանք այն եզրակացության, որ 1170 թ. սելջուկները Բաղարերդը գրավել էին հարձակվելով այդ ուղղությամբ։ Բաղարերդի անկման մասին Ս. Օրբելյանը հաղորդում է. «Ի 619 թուին կրկին բարկացաւ Աստուած Բաղաց աշխարհիս և Սիւնեաց նահանգիս. և զապաւէնն ամենեցուն և զտեղի ապաստանի զանառիկ ամուրն զԲաղարերդ մատնեաց ի ձեռս Իսմայէլի անիծեալ և գիշախանձ առն, որ բաղում զօրոք եկն և ոչ կարաց հնարել ինչ։ Ապա պատրող բանիւք խաբեաց զպարզամիտ արս քրիստոնեայս Աղաչուցիս. և նոքօք նախ առ զքարն կկոց. և ապա ի գիշերի՝ այնու արամբք գողացաւ զԲաղարերդ...»[11]։

Եթե հիմք ունենանք Ս. Օրբելյանի հիշյալ վկայությունը և մեր նկարագրած ճանապարհով Բաղաբերդից ընթանանք դեպի Տաթև, ապա «Քյարտիչլին» կհամապատասխանի տեքստում հիշվող Կկոց քար բերդին, իսկ Աղաչու բերդը՝ Աչաղվային։ Տեքստում չեն հիշվում Բերդ—Առավելատաշտը, Տանձավայրի բերդը և Դանձաբերդը, այն դեպքում, երբ տեղանքի հետազոտությունից պարզվեց, որ առանց այդ ամրություններին տիրանալու անհնարին կլիներ գրավել Կկոց քարը և մոտենալ Բաղարերդին։ Դա ըստ երևույթին պետք է բացատրել նրանով, որ այդ բերդերը ավելի շուտ էին առնվել ու կործանվել, քան հիշյալ ամրությունները։ Թերևս, հնարավոր է նաև, որ Ս. Օրբելյանը կարևոր է համարել շարադրելու միայն Բաղարերդի գրավման փաստը։ Սելջուկների հարձակման ուղին չէր կարող լինել Տաթև—Բաղարերդ առաջին ճանապարհը, այդ ճանապարհին Բաղարերդը պաշտպանող ամրություն չի եղել, քանի որ այդ կողմից բերդն ունեցել է անառիկ դիրք, իսկ Աչաղվան, որի բնակիչներին խաբելով թշնամին գրավեց Բաղաբերդը, գտնվել է մեր նկարագրած ճանապարհին։ Նա հիշվում է նաև Վահանավանքին նվիրաբերված գյուղերի թվում, որոնք գտնվում էին վանքի դիմաց. «...զգեղանն որ ի հանդէպ վանացն՝ զԱչաղու և զԱչաղուա, զԳետարավայր և զՇեկք...»[12]։ Աչաղու և Շեկք գյուղերը այժմ էլ կան և գտնվում են Վահանավանքի դիմաց, Ողջի գետի ձախ ափին[13], իսկ նրանց միջև բարձրացող լեռան վրա ներկայիս Աչաղու բերդն է, որը և հին Աչաղվան է։

Հաջորդ ճանապարհը, որին ցանկանում ենք անդրադառնալ, անցնում էր Քաշունիք գավառի տարածքով և հասնում մինչև Բարկուշատ գետը։ Այն սկիզբ էր առնում Տանձավեր գյուղում՝ Տաթև—Բաղաբերդ ճանապարհից։ Ս. Օրբելյանի և հետագա մատենագիրների մոտ կան վկայություններ[14], որոնք վերաբերում են Տաթևից դեպի Քաշունիք գավառի Երիցվանքը տանող ճանապարհին։ Այն սկիզբ էր առնում հիմնական ուղուց։ Ճանապարհի երկարությամբ կառուցված մի քանի պաշտպանական ամրությունները վկայում են նրա կարևորության մասին, ուստի անհրաժեշտ ենք համարում հանգամանորեն նկարագրել այն։ Տանձավեր գյուղից ճանապարհը ընթանում էր գետի ձախ ափով մինչև Վանդա բերդը, որը գտնվում է Տանձավերից մոտ 5 կմ արևելք[15]։ Այդտեղից շարունակելով ընթանալ գետի հոսանքի ուղղությամբ գետանցքով տեղափոխվում էր գետի աջ ափը և հետո նորից շարունակում ընթանալ ձախ ափով մինչև Ադրբ. ՍՍՀ Ղուբաթլուի շրջանի Այինի[16] գյուղը։ Այդտեղից մի փոքրիկ ճանապարհ տանում էր դեպի Ղափանի շրջանի Դավիթ-բեկ գյուղի արևելյան մասում, գետի ձախ ափին կառուցված և այժմ «Կարանի եկեղեցի» կոչվող շինությունը։ «Կարանի եկեղեցու» ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ կառույցը եկեղեցի չէ, այլ անծածկ, ուղղանկյուն հատակագծով սենյակ, ունեցել է մեկ մուտք, որ բացվել է հարակից սենյակից, որից միայն հետքեր են մնացել։ Այդ են վկայում սենյակի հարավային մասում, ամբողջ պատի երկարությամբ, մուտքից քիչ բարձր 7 քառակուսի անցքերը, որոնք զբաղեցնում են պատի հաստության կեսը։ Դա ենթադրել է տալիս, որ նրանք հարակից սենյակի

11 Ստեփաննոս Օրբելյան, էջ 335։

12 Նույն տեղում, էջ 239։

13 Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, էջ 133։

14 Ստեփաննոս Օրբելյան, էջ 75, 164, 232։ «Աբրահամ Կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին Պարսից», Վաղարշապատ, 1870, էջ 73։ «Ընտիր պատմութիւն Դավիթ բեգին...», էջ 57։

15 Ա. Ղարագյոզյան, Սյունիքի Բաղք և Քաշունիք գավառների մի շարք բնակավայրերի տեղադրության շուրջը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, № 3, էջ 198։

16 Այինը Քաշունիք գավառի Ակն բնակավայրն է (տե՛ս Ա. Ղարագյոզյան, նշվ. աշխ., էջ 197)։

ծածկը կրող հեծաններին են ծառայել։ Կարծում ենք, որ մնացած կառույցը ավելի մեծ բարձրություն է ունեցել, քան հարակիցը, որովհետև պատը, որի վրա պահպանվել են անցքերը ավելի բարձր է և բանդվել է, երբ ծածկը նստել է։ Պահպանված շենքի արևմտյան մասում ևս մնացել են շինության հետքեր։ Հավանական է, որ «Կարանի եկեղեցին» բերդ է եղել, որովհետև դիրքը միանգամայն անառիկ է՝ 3 կողմից շրջապատված է բնական ամրություններով. այդ է վկայում նաև գետի վերին և ստորին հոսանքների շրջանում կառուցված բերդերի առկայությունը։ Ային գյուղից ճանապարհը հասնում էր գետի ստորին հոսանքների շրջանում գտնվող և այժմ «Բարաք» կոչվող ամրոցը, որը գտնվում է Ղուրաթլուի շրջանի Աշաղի Խոջամուսախլու[17] գյուղից 2 կմ հյուսիս. մի հսկայական ժայռի վրա։ Ժայռի վերնամասը ընդգրկված է եղել մեծ շրջագծով պարսպի մեջ, որից պահպանվել են 6 աշտարակներ, ինչպես նաև դրանք միմյանց կապող պարսպի մնացորդներ արևելյան և արևմտյան հատվածներում։ Համեմատաբար լավ պահպանված աշտարակների բարձրությունը հասնում է 2 մետրի։ Աշտարակներն ու պարիսպները կառուցված են անմշակ քարերով, արևելյան մասի աշտարակներից մեկի վրա պահպանվել են սվաղի հետքեր, որ հավանաբար ուշ շրջանի է։ Բերդը ունեցել է մեկ մուտք արևելյան կողմից։ Թերևս այս կառույցը համապատասխանում է Քաշունիք գավառի Անդոկարբերդին[18], որը վկայված է Սյունիքի նշանավոր բերդերի թվում[19]։ Ենթադրվում է, որ Անդոկարբերդը կառուցվել է IV դարում Անդոկ իշխանի կողմից[20]։ Բերդի Բաբաք անունը, որ առաջ է եկել ավելի ուշ, կարող է կապ ունենալ ինչպես խուրրամյանների առաջնորդ Բաբեկի անվան հետ, որը եղել է Սյունիքում, մասնավորապես Բաղքում[21], այնպես էլ Արցախի Խաղբակյան (կամ Պռոշյան) տոհմական անվան հետ[22]։ Չի բացառվում նաև, որ այս անունը ծագում է ժամանակակից պարսկերեն «բարաք» բառից, որը նշանակում է «ապահով», «ամուր»[23]։ Ճանապարհը այդտեղից հասնում էր Բարկուշատ գետը և միանում նրա աջ ափով ընթացող ճանապարհին։ Դամիրճիլար գյուղում գտնվող կամուրջով նրանից առանձնանում էր մեկ ուրիշ ճյուղ, որը անցնում էր գետի աջ ափը, որտեղ մի փոքրիկ ժայռի վրա, տեղացիների վկայության համաձայն, բերդ է եղել։ Այժմ այստեղ նշմարվում են սենյակների փոսաձև հետքեր։ Լավ պահպանված են տաշտանման երկու քարե ջրավազանները։ Ուշագրավ է, որ Քաշունի գետի աջ և ձախ ափերի ջրբաժան լեռները այս հատվածում ընդհուպ մոտենալով միմյանց գետին չհասած ընդհատվում են՝ ստեղծելով բնական միջանցք, որի միջով հոսելով Քաշունի գետը թափվում է Բարկուշատը։ Հիշյալ միջանցքի համար որպես դուռ ծառայում է այս ժայռը, որի վրա եղել է բերդը։ Այն փակել է Քաշունի գետի հովտով անցնող ճանապարհը արևելքից։ Հայտնի է, որ անցյալում հայերը արտաքին աշխարհի հետ հաղորդակցվում էին «Դրունք», «Կղեսուրբ», «Պահակ», «Կապան», «Զեռնակ» կոչվող լեռնանցքների միջոցով, որոնք ունեին մեծ ռազմաստրատեգիական նշանակություն, որի պատճառով այդտեղ կառուցում էին ամրություններ, տեղավորում կայազորներ և մաքսգանձում այդտեղից անցնող քարավաններից[24]։ Հավանաբար նման ամրություն է եղել նաև այս բերդը. նրա աշխարհագրական դիրքի հետազոտությունից եկանք այն եզրակացության, որ դա պետք է լինի Քաշունիք գավառի Պահու բերդը[25], որովհետև տեղանունը կազմված է «պահ» (պահպանություն) և «բերդ» բառերից[26]։ Այդտեղից ճանապարհը, որոշ ժամանակ ընթանալով գետի հոսանքի հակառակ ուղղությամբ, հասնում էր գետի միջին մասում վեր խոյացող ժայռի վրա կառուցված բերդը, որը գտնվում է Ղուրաթլուի շրջանի Փոլադլու գյուղի մոտ և տեղացիների կողմից անվանվում է «Աստծո ժայռ»։ Կառույցը ուղղանկյուն շինություն է՝ ներբուստ բաժան-

---

17 Տեղական ավանդության համաձայն Խոջամուսախլու գյուղի անունը առաջացել է այս գյուղի հիմնադիր Խոջա Միսակի անունից։

18 Ստեփաննոս Օրբելյան, էջ 519։

19 Նույն տեղում, էջ 13։

20 Հ. Հյուբշման, Հին հայոց տեղոյ անունները, թարգմանեց Հ. Բ. Պիլեղիկեյան, Վիեննա, 1907, էջ 322։

21 Տե՛ս «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, էջ 263։

22 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, տոհմագրություն Խաղբակյանց։

23 Տե՛ս Մոհամմադ Մոյին, Բորհան-ե ղաթե (պարսկերեն լեզվով), հատ. Ա, Թեհրան, 1964, էջ 202։

24 Ս. Երեմյան, Հայաստանի բնաշխարհը, տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, Երևան, 1971։

25 Ստեփաննոս Օրբելյան, էջ 519։

26 Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 397։

ված 4 քառակուսի սենյակների։ Շինության հյուսիսային պատը կառուցվել է թեք հարթության վրա, որի պատճառով տարբեր է նրա բարձրությունը արտաքին և ներքին կողմերից։ Մնացած հատվածներում պահպանվել են միայն հիմնապատերը։ Դրավոր վկայություններ չլինելու պատճառով հնարավոր չէ վերականգնել այս բերդի պատմական անունը։

Ռազմաստրատեգիական մեծ նշանակություն է ունեցել Բղենն և Քաշունիք գավառների տարածքով անցնող ճանապարհը, որովհետև նրա պաշտպանությունը ապահովում էին Սյունաց նշանավոր Բորոտան, Բղենն և Բարկուշատ բերդերը[27]։ Այն ընթանում էր Բարկուշատ գետի աջ ափով՝ միմյանց կապելով հիշյալ ամրությունները, հատվում էր Քաշունի գետի հովտով անցնող ճանապարհի հետ և հասնում մինչև Արաքս։ Նրա նշանակությունը հատկապես մեծ է եղել XII—XIII դդ., երբ հաճախակի դարձան սելջուկ թուրքերի արշավանքները դեպի Սյունիք։ Այսպես, 1104 թ. սելջուկները Սյունյաց թագավորությունից գրավում են Որոտան բերդը[28], որը Սյունիքի թագավորության ամենահյուսիսային բերդն էր և հեռու չէր սահմանից[29], իսկ 1105 թ.՝ Բղենը[30]։ Թեև Ս. Օրբելյանը չի հիշատակում Բորոտան և Բարկուշատ բերդերի անկման մասին, սակայն պետք է ենթադրել, որ նրանք ևս գրավվել էին։ Բորոտանը այն պատճառով, որ շատ մոտ էր գտնվում Բղենին, իսկ Բարկուշատը՝ ինչպես և Բորոտանը, չեն հիշվում «Սյունյաց կամ Բաղաց» թագավորության կազմում այս իրադարձություններից հետո մնացած բերդերի թվում. «...բայց մնացին Բաղաբերդ և Գեղի, Կաքաւաբերդ, Շլորուտն, Կարճևան, Մեղրի, Դրհամ առ Գրիգորոյ թագաւորի...»[31]։ Զաքարյանների կողմից XIII դարի սկզբին Սյունիքում աղատագրված բերդերից առաջին հերթին հիշվում են վերոհիշյալ ամրությունները[32]։ Այս ամենը հաստատում է նաև այն, որ դրանք սահմանային բերդեր էին և Սյունիքի հյուսիս-արևելյան սահմանը նշված ժամանակաշրջանում անցել է Որոտան, Բորոտան, Բղենն և Բարկուշատ բերդերի մոտով։ Այդ բերդերը գտնվում էին Որոտանի ձախ ափին, հետևապես որպես սահմանագիծ կարող էր հանդիսանալ Բարկուշատ գետը։ Բարկուշատ և Հակարի գետերի ջրախառնման վայրում, հիշյալ ճանապարհից առանձնանում էր մեկ ուրիշը, որը թեքվում էր դեպի արևմուտք և հասնում մինչև Սուսանասար լեռնաշղթան, այնուհետև ընթանում դեպի հարավ և լեռնաշղթայի վրայով հասնում մինչև նրա գագաթին կառուցված Բուրջ կոչվող բերդը[33]։

Ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն է ունեցել մեկ ուրիշ ճանապարհ, որը անցնում էր Կովսական գավառի տարածքով։ Այն սկսվում էր Ողջի գետի միջին հոսանքի շրջանում՝ Կապան քաղաքից, անցնում էր Վահանավանքի միջով և Հալիձոր բերդի մոտով, այնուհետև թեքվում էր դեպի հարավ, հասնում Վաշագան գյուղը, որից հետո Վաշագան գետի կամուրջով՝ Բաղաբուրջ։ Բաղաբուրջից ճանապարհը ընթանում էր դեպի հարավ-արևելք մինչև Սրահակ գյուղատեղին, այնուհետև նորից թեքվում դեպի հարավ, հատում Գեղանուշ գետը և ընթանալով դեպի արևելք՝ հասնում մինչև Ծակ քար լեռնանցքը, որի մոտ գտնվում է Բերդաքար ամրոցը։ Շարունակելով ընթանալ հարավ-արևելք, ճանապարհը Շիկահող գետի կամուրջով, Ծավ գյուղից հյուսիս գտնվող Կոնաս, այնուհետև Ծավի հարավային մասում գտնվող Գոհարի բերդ ամրությունների մոտով անցնելով՝ հասնում էր Բարդաղ գյուղը[34]։ Այդտեղից թեքվում էր դեպի արևմուտք և հասնում այժմ Կաղիր կալասի կոչվող բերդը, որը գտնվում է Մեղրու շրջանի Նյուվադի գյուղից 8 կմ արևելք, Արևիքի լեռնաշղթայի վրա։ Հիշյալ ճանապարհից առանձին արահետներ տանում են դեպի նշված բերդերը և միմյանց կապում գավառի տարածքում գտնվող բնակավայրերը։

Վերոհիշյալ ճանապարհների պաշտպանությունը ապահովող բերդերը, որոնք կառուցված էին նրանց երկարությամբ, միմյանցից որոշակի հեռավորության վրա, հանդիսանում էին Սյունիքի հարավ-արևելյան մասի պաշտպանական համակարգի ամրություններ, որոնք խիստ լեռնային, բնական ամրություններով հարուստ նահանգը դարձնում էին անմատչելի հակառակորդի համար։ Այդ համակարգը ստեղծվել էր

---

27 Հիշյալ բերդերի տեղադրության մասին տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1, էջ 272—275։

28 Ստեփաննոս Օրբելյան, էջ 334։

29 Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, էջ 69։

30 Ստեփաննոս Օրբելյան, էջ 334։

31 Նույն տեղում, էջ 335։

32 Նույն տեղում, էջ 392։

33 Հիշյալ բերդի պատմական անվան վերականգնմանը մենք կանդրադառնանք մեկ այլ առիթով։

34 Բարդաղը Կովսական գավառի Բարդուքաղք գյուղն է (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 288)։

փոխպարտ օգնությունը հեշտացնելու նպատակով։ Այն նախապես գիտակցորեն մշակված պլանով չի կառուցվել, այլ գոյացել է դարերի ընթացքում, ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ և լրացրել է պաշտպանության համար օգտագործվող ժայռագագաթներին կառուցած դիրքերի ու քարանձավների ցանցը[35]։

Սյունիքի հարավ-արևելյան մասի պաշտպանական համակարգը բաղկացած էր մի քանի պաշտպանական գոտիներից։ Նրանցից մեկը գտնվում էր Բարկուշատ գետի ձախ ափին, որի մեջ մտնում էին Բորոտան, Բղեն, Բարկուշատ բերդերը։ Նրան էր միանում Քաշունի գետի ձախ ափով անցնող ճանապարհը՝ իր երկայնքով կառուցված ամրություններով։ Պաշտպանական մեկ այլ գիծ էին ներկայացնում Տաթև—Բաղաբերդ ճանապարհին կառուցված բերդերը, որոնք կապվում էին Քաշունի և Ողջի գետերի ձախափնյա ամրությունների շարքին։ Ընդ որում Բաղաբերդ, Կկոց քար, Աչաղվա ամրությունները կարող էին միաժամանակ համարվել ինչպես Տաթև—Բաղաբերդ գծի, այնպես էլ Ողջի գետի ձախափնյա դոտու բերդեր։ Գեղիի աջ ափին կառուցված Գեղի, Ողջի գետի վերին հոսանքների շրջանում գտնվող Շլորուտ և այդ գետերի ջրախառնման անկյունում գտնվող Ջևու բերդերը, որոնք փոքրիկ Զորք գավառում էին[36], պաշտպանում էին Բաղաբերդը հարավից և Տաթև—Բաղաբերդ պաշտպանական գծի շարունակությունն էին կազմում։ Ռազմաշինությունների մեկ այլ շարք գտնվում էր Կովսական գավառի տարածքում։ Նրա մեջ էին մտնում Կապան քաղաքը, Բերդաքար, Կոնաս, Գոշարի բերդ ամրությունները։ Այս գոտին կապված էր Արևիքի գավառում Արաքսի ձախ ափին կառուցված Կարճևան, Մեղրի, Կադիր կալասի բերդերի հետ[37]։

Հիշյալ պաշտպանական գոտիները անկասկած միանում էին Սյունիքի մյուս գավառների տարածքում գտնվող ռազմաշինություններին՝ ամբողջացնելով նահանգի պաշտպանական համակարգը։

Ա. Հ. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

Ախուրյանի ջրամբարի կառուցման կապակցությամբ, այդ տարածքում մնացող նախնադարյան ժամանակաշրջանի հնագիտական հուշարձանները հետազոտելու և ոչնչացումից փրկելու նպատակով, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի նախնադարյան ժամանակաշրջանի հուշարձաններն ուսումնասիրող ջոկատը 1977 թ. պեղումներ սկսեց Շիրակավան գյուղի մոտ գտնվող բնակատեղիում ու նրան կից դամբարանադաշտում։ Աշխատանքների ընթացքում, որոնք շարունակվեցին նաև 1978 թ., պեղվեցին 34 դամբարան և բնակավայրից առանձին հատվածներ, որոնք ուրվագծում են Շիրակավանի տարածքի նախնադարյան բնակիչների անցած պատմական ուղին մ. թ. ա. III—I հազ. ընթացքում։ Զծանրանալով բազմապիսի նյութերի քննության վրա, անդրադառնանք 1977 թ. պեղված №№ 10, 11 դամբարաններից հայտնաբերված իրերին, որոնք, ներկայացված լինելով մ. թ. ա. I հազ. առաջին քառորդին բնորոշ գրեթե բոլոր հիմնական նմուշներով, լույս են սփռում նաև Ախուրյանի հովտի նախնադարյան բնակչի հավատալիքների առանձին մանրամասների վրա։

Դամբարանադաշտում պեղված մյուս բոլոր դամբարանների նման, սրանք ևս գետնի մակե-

35 Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 40։ Սասանյանների տիրապետության օրոք Սյունիքում պաշտպանական ամրություններ կառուցել են նաև պարսիկ արքաները։ Խոսրով I Անուշիրվան (531—578) թագավորին է վերագրվում Սյունյաց Շահապոնից, Վայոց, Գիլաբ բերդերի կառուցումը (Բալաձորի, Հայաստանի նվաճումը, տե՛ս Գ. Խալաթյան, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, «Հանդես ամսօրյա», 1903, № 4, էջ 125)։ Պարսկական արքունիքի կողմից Սյունիքի պաշտպանության ապահովումը բացատրվում է Անդրկովկասում վերջինիս ունեցած ուրույն աշխարհագրական դիրքով։ (Տե՛ս С. Еремян, Сюния и оборона Сасанидами Кавказских проходов, «Известия АрмФАНа», 1941, № 7 (12), էջ 33—40)։

36 Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, էջ 108—112։

37 Կարճևան, Մեղրի և Կադիր կալասի բերդերը գտնվում էին միևնույն ուղղության վրա, Կարճևանը և Մեղրին՝ միմյանց մոտ, իսկ Կադիր կալասին՝ բավական հեռու։ Կարճևան և Մեղրի բերդերի միջև եղած հեռավորությունը նկատի ունենալով կարծում ենք, որ Մեղրի և Կադիր կալասի բերդերի միջև, միևնույն գծի վրա, ևս երկու բերդ է եղել, որը հնարավոր կլինի ճշտել ապագայում, տեղանքի ուսումնասիրության միջոցով։